

3753



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիոյան



«01» 04 2025թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 086 - 25

Նախաձեռնող՝

«Էներջի Էս Ջի Էս» ՍՊԸ

ք. Երևան, Հակոբյան փողոց, 9 2.

Գործունեությունը՝

Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ դաշտամիջյան փողոցի թիվ 1 և թիվ 3 հողամասերում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում

Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 086 - 25

« 01 » ապրիլի 2025թ.

**Դաշտադեմ բնակավայրի Սահղներ դաշտամիջյան փողոցի թիվ 1 և թիվ 3 հողամասերում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Էներջի Էս Ջի Էս» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Դաշտադեմ և Թալին բնակավայրեր

**Ներածական մաս.** Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ «Էներջի Էս Ջի Էս» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է կառուցել արևային ֆոտովոլտային էլեկտրակայան Դաշտադեմ բնակավայրի Սահղներ դաշտամիջյան փողոցի թիվ 1 և թիվ 3 հողամասերում:

Գործունեության նախագծման իրականացման համար հիմք են հանդիսացել նախագծային փաստաթղթերը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականները (NN 13042023-02-0012, 13042023-02-0016), համայնքի կողմից տրված 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 148 և դեկտեմբերի 26-ի N 149 նախագծման թույլտվությունները, գործունեության իրականացման Լիցենզիան (ԼԷՆ<sup>Գ</sup> 0763, գործողության ժամկետը 2046թ. հունվարի 18), «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը:

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցումը փորձաքննության է ենթարկվել համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը Բ կատեգորիայի գործունեության տեսակ է:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սահղներ դաշտամիջյան փողոց թիվ 1 և թիվ 3, համապատասխանաբար՝ 1.42 հա և 3,18 հա հողամասերում, ընդհանուր 4,6 հա տարածքի վրա: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Տարածքը կառուցապատված չէ, տարածքում բացակայում է ծառափայլի բուսականությունը: Երկու հողամասերն իրարից բաժանված են գրունտային ճանապարհով:

Գործունեության տարածքի հեռավորությունը միջպետական ճանապարհից 1,23 կմ է, Դաշտադեմ բնակավայրի անվանումը բնակելի տնից՝ 1.12 կմ, մոտակա ջրային ռեսուրսներից/վտակներից՝ 44 կմ: Երկր գտնվում են ինժեներական ենթակառուցվածքներ, համայնքային և մասնավոր սեփականության հողատարածքներ:

Համաձայն երկրաբանական ուսումնասիրության արդյունքների՝ գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը կազմված է լավային հոսքերով, որոնց վրա



տարածված են տուֆային նստվածքները: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են: Տեղամասում, մինչև 4 մ խորությամբ փորված շուրֆերով, ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և, ըստ ֆոնդային տվյալների, գտնվում են 15 մ խորը հորիզոններում: Կլիման չափավոր ցամաքային է, շոգ ու չորային ամառներով, չափավոր ցուրտ ձմեռներով: Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթները՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են: Ինժեներատերկրաբանական և հիդրոտերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

«Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները կամ դրանց աճելավայրերը և կենդանատեսակները կամ դրանց բնադրավայրերը բացակայում են: Համաձայն պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի ուսումնասիրության արդյունքների՝ դիտարկվող տարածքներում փաստագրված հուշարձաններ չկան: «Տատիկ» քարե քանդակ երկրաբանական հուշարձանը գտնվում է 0,57 կմ հեռավորության վրա:

Համաձայն էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է 4000 կՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 6400 կՎԱ տրանսֆորմատորային ենթակայանի /թվով 4 ենթակայան/ կառուցում և միացում գոյություն ունեցող 220/110/10 կՎ «Աշնակ» ենթակայանի 10 կՎ լարման N 9 պահուստային բջջից՝ մալուխային միացմամբ:

Թիվ 1 հողամասում (1,42 հա) կառուցվելու է 999 ԿՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային էլեկտրակայան և մեկ ենթակայան, վահանակների քանակը՝ 1848 հատ:

Թիվ 3 հողամասում (3,18 հա) կառուցվելու է 2997 ԿՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային էլեկտրակայան և երեք ենթակայան, վահանակների քանակը՝ 5064 հատ:

Վահանակների քանակը երկու հողամասերում ընդհանուրը կազմում է 6912 հատ: Ենթակայանների ընդհանուր թիվը՝ 4, արևակայանի ընդհանուր հզորությունը՝ 3996 ԿՎտ: Բոլոր միացումներն իրականացվելու են եռակցումով, մետաղական կոնստրուկցիաները միացվելու են հողանցման կոնտուրին:

Օդային գծի ընդհանուր երկարությունը կազմում է 3007 մ, որից մոտ 950 մ անցնելու է Դաշտադեմ բնակավայրի, իսկ 2057 մ՝ Թալին բնակավայրի տարածքով: Ուղեգծում նախատեսված է 75 հատ ե/բ կանգնակների տեղադրում: Մալուխագծի կառուցման ավարտից հետո իրականացվելու է համայնքային հողերի վերականգնում: Ծառահատումներ և ենթակառուցվածքների փոփոխություններ չեն կատարվելու, նոր ճանապարհներ չեն կառուցվելու, օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները:

Էլեկտրակայանի մուտքի մոտ 3-րդ հողամասում նախատեսվում է 30 մ<sup>2</sup> մակերեսով տնակ պահակատան կառուցում՝ պահեստային հատվածով՝ խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած վահանակների ժամանակավոր պահման համար: Պահակատունը ջեռուցվելու է 25 կՎտ/0.8/0,4 կվ տրանսֆորմատորից՝ էլեկտրական ջեռուցիչով:

Կայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 1,9 մ բարձրության մետաղական ցանկապատով՝ դարպասային մուտքով:

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղակայման աշխատանքները տևելու են 8 ամիս, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 30 աշխատակից: Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շինակտիվների և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Շինհրապարակում (1000 մ<sup>2</sup>) պահեստավորվելու են շինանյութերը, կայանվելու է շինտեխնիկական, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն:



Տեխնիկա-տրանսպորտային միջոցներից օգտագործվելու են ավտոինքնաթափ, կցորդային բեռնատար, խորքային թրթռիչ, աշտարակային կոունկ և այլն: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված սպասարկման կետերում: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների վանալու հարթակ:

Գործունեության համար անհրաժեշտ նյութերը (մալուխ, մետաղ, այլումին, պողպատ, մեկուսիչ նյութեր, խիճ, փայտանյութ և այլն) և բետոնանյութը՝ պատրաստի վիճակում, մատակարարվելու են լիցենզավորված կազմակերպությունների միջոցով: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների, տեղադրվելու են տակդիրների վրա: Տարածքում վառելիքի պահեստավորում չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի, օժանդակ կառույցների հիմքերի փորման, հենասյուների կանգնակների կառուցման հողային աշխատանքներ, ինչի հետևանքով առաջանալու է 959 մ<sup>3</sup> ծավալի հողային հանույթ, որից՝ 375 մ<sup>3</sup> օգտագործվելու է հետլիցքի, իսկ մնացած՝ վտանգավոր նյութերով չաղտոտված 584 մ<sup>3</sup> հողը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր: Հողաբուսաշերտը առկա է տեղ-տեղ՝ ավազակավի լցոնով: Առաջանալու է 80 մ<sup>3</sup> ծավալի բուսահող, որը պահվելու է տեղում, օգտագործվելու է բարեկարգման նպատակով: Հողային հանույթը պահպանելու նպատակով ձեռնարկվել են միջոցառումներ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն, այդ թվում՝ ավելացած հողային հանույթը պահվելու է առանձին հողաթմբերով, ծածկվելու է անջրաթափանց բրեզենտե ծածկույթով, պարբերաբար իրականացվելու է ջրցան և այլն:

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է ջրցանի և անիվների վացման, հնարավոր հրդեհամարման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի, տեխնիկական ջուրը՝ ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական և կենցաղային հոսքաջրերի հեռացման և շահագործման փուլում աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի սանհանգույց (բիոգուգարան)՝ վացարանով, որի սպասարկումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինարարական աղբի տեսքով՝ նյութերի մնացորդներ (ավազ, մանրախիճ, պլաստմասե իրեր և այլն), աղտոտված լաթեր, պարկեր, կենցաղային աղբ, մետաղական մնացորդներ և այլն:

Շահագործման փուլում առաջանալու են նաև վնասված վահանակներ և այլ խոտանված մասեր, որոնք ժամանակավոր կուտակվելու են տարածքում կառուցվող փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Համաձայն Հաշվետվության՝ արևային կայանի ներկրված վահանակներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված վահանակները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը:

Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվել է կառուցել 1145 լ տարողության յուղընդունիչ /4հատ/ (հոր)՝ բետոնապատ՝ խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ: Դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանցված տրանսֆորմատորային յուղերը (4,2 տ) հավաքվելու են համապատասխան տարանջրի մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Մշակված և Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և հարակից տարածքներում չի գերազանցի գործող օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարական փուլում արտանետումները օդային ավազան լինելու են ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների շահագործումից առաջացող փոշու տեսքով, որոնց կանխարգելելու կամ նվազեցնելու նպատակով մշակվել են համապատասխան բնապահպանական միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի լինելու:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյունների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

Գործունեության հնարավոր դադարեցման դեպքում Ընկերության կողմից նախատեսվել է սարքավորումների, արևային վահանակների, էլեկտրասյունների ապամոնտաժում, թափոնների կառավարում, արևակայանի, ենթակայանի տարածքների կարգաբերում:

ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու կամ մեղմելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական կառավարման պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը, սոցիալական միջավայրը և այլն:

**Պատճառաբանական մաս.** Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացքում իրականացվել է արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ, որի հիման վրա գնահատվել են ազդեցությունները: Մշակվել են ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետ իրականացման մոնիթորինգի ծրագիր:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված կլինի շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ: Համաձայն Հաշվետվության՝ իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում են:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի և քաղաքաշինության կոմիտեերը, Արագածոտնի մարզպետարանը, Թալինի համայնքապետարանը, Թալին և Դաշտաղեմ բնակավայրերը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին և Դաշտաղեմ բնակավայրերում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:



Փորձաքննական գործընթացում հաշվի են առնվել ներկայացված կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները:

### Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային/ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն և այլն/ մշտադիտարկումներ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր՝ բաց հասանելիությամբ:
- Անհրաժեշտ է հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
- Թափոնների, այդ թվում շահագործման ընթացքում առաջացող վտանգավոր թափոնների կուտակումը, հեռացման ձևը, եղանակը, աղբավայրում տեղադրումն իրականացնել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացնել գործունեության տարածքից՝ լիցենզավորված ընկերության միջոցով և բացառել կայուն օրգանական աղտոտիչներով շրջակա միջավայրի աղտոտումը և տարածումը:
- Արևակայանի /էլեկտրական ցանցեր, ենթակայան, բաշխիչ սարքավորումներ/ կառուցման և շահագործման ընթացքում անվտանգության գոտու ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել 2023 թվականի ապրիլի 13-ի N 523-Ն որոշման պահանջներով:
- Համաձայն ԿԳՄՍ նախարարության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների (տարածքին բնորոշ է հուշարձանների բազմաքանակություն և դրանց վատ պահպանվածություն)՝ անհրաժեշտ է դիտարկվող հողատարածքներում հողային աշխատանքները կատարել հնագետի հսկողությամբ:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Էներջի Էս Զի Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի Սաիդներ դաշտամիջյան փողոցի թիվ 1 և թիվ 3 հողամասերում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»  
ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»  
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան